ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 մայիսի 2021 թվականի N 45

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 7-րդ գլխով՝ ***որոշում եմ.***

1. Նիկոլայ Մեխագի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող 031-44 ծածկագրի 0.083 հա (վկայական N 1284185) բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում տրամադրել 10 փողոց N 9 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 թվականի մայիսի 3

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մայիսի 2021 թվականի N 46

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասով՝ ***որոշում եմ.***

1. Լուծել Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ղեկավարի 2017 թվականի մարտի 1-ի «2017 թվականի փետրվարի 28-ին հողամասերի վարձակալության տրամադրելու նպատակով մրցույթում հաղթող ճանաչված Վարազդատ Հովհաննիսյանի հետ պայմանագիր կնքելու մասին» N 13 որոշմամբ Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի սեփականություն հանդիսացող 0214-0033 ծածկագրի 4.38367 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նկատմամբ կնքված վարձակալության պայմանագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 թվականի մայիսի 4

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մայիսի 2021 թվականի N 47

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասով՝ ***որոշում եմ.***

1. Լուծել Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ղեկավարի 2017 թվականի մարտի 1-ի «2017 թվականի փետրվարի 28-ին հողամասերի վարձակալության տրամադրելու նպատակով մրցույթում հաղթող ճանաչված Ռուստամ Ալեքսանյանի հետ պայմանագիր կնքելու մասին» N 14 որոշմամբ Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի սեփականություն հանդիսացող 0214-0037 ծածկագրի 5.5818 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի հողամասի նկատմամբ կնքված վարձակալության պայմանագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 թվականի մայիսի 4

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 մայիսի 2021 թվականի N 48

ԱՐԹՈՒՐ ԲԱԲԱՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի՝ 2021 թվականի ապրիլի 8-ի և ապրիլի 27-ի գրությունների՝ քաղաքացի Արթուր Բաբայանի կողմից Նոր Արտամետ համայնքի 1 փողոց թիվ 36 հասցեում առանց համապատասխան շահագործման թույլտվության շահագործվել և շարունակում է շահագործվել շինանյութի խանութ, մթերային խանութ և ավտոտեխսպասարկման կետ, ինչի առթիվ Նոր Արտամետի համայնքապետարանի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 34-րդ հոդվածի հիմքերով վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցվել է վարչական վարույթ: 2021 թվականի մայիսի 5-ին՝ ժամը 11^{00}-ին նշանակված վարչական վարույթի լսումներին հրավիրվել է վարույթի մասնակից Արթուր Բաբայանը, որը սակայն չի ներկայացել:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 152.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ ***որոշում եմ.***

1. Արթուր Բաբայանի նկատմաբ նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի 1-ին փողոց թիվ 36 հասցեում առանց համապատասխան շահագործման թույլտվության շինանյութի խանութ, մթերային խանութ և ավտոտեխսպասարկման կետ շահագործելու համար:
2. Պարտավորեցնել Արթուր Բաբայանին 15-օրյա ժամկետում տուգանքը մուծել համայնքապետարանի 900115002132 հաշվին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 թվականի մայիսի 5

գ. Նոր Արտամետ